

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի տարածքային հարկային տնտեսություն /պետ. գրանցման ամսաթիվ 03.07.2000թ. գր. համար՝ 31.0167, վկ. համար՝ Բ 004857 ՀՎՀՀ 04412837
ք. Արմավիր Չարենցի 24 հեն. 0237-6-00-69/
Պատասխանող՝ «Հատույսա շինանյութ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն /ՀՎՀՀ 04416201, Արմավիրի մարզ, գյուղ Բազարան, տնօրեն Արտավազդ Հակոբյան /գ. Չանֆիդա/, սպասարկող բանկ՝ ՎՏԲ Հայաստան բանկի Արմավիր մ/ճ հ/հ 160091023020/

Հ Ա Յ Յ Ա Դ Ի Մ ՈՒ Մ

Պատասխանողից պետական բյուջեի օգտին 984.007 դրամ բռնագանձելու պահանջի մասին

Հարգելի դատարան

Պատասխանող «Հատույսա շինանյութ» ՍՊ ընկերությունը գրանցվել է ՀՀ պետ. ռեգիստրի Արմավիրի ՏԲ-ում 12.05.2005թ-ին և ստացել է պետական գրանցման 03Ա 063377 վկայականը: Հարկային տնտեսությունում կանգնել է հարվատման և ստացել է հարկ վճարողի 04416201 հաշվառման համարը /ՀՎՀՀ/:

01.12.2009թ. դրությամբ «Հատույսա շինանյութ» ՍՊ ընկերության պարտքը պետական բյուջեի նկատմամբ կազմում է 984.007 դրամ, այդ թվում ապառք՝ 516.397 դրամ, տույժ՝ 467.610 դրամ: Պատասխանողի պարտքն ըստ հարկատեսակների և պարտադիր վճարների բաշխվում է հետևյալ կերպ՝

Եկամտահարկ - ընդամենը պարտք՝ 24.727 դրամ, այդ թվում ապառք՝ 16.772 դրամ, տույժ՝ 7.955 դրամ:

Պետական տուրք - ընդամենը պարտք՝ 959.280 դրամ, այդ թվում ապառք՝ 499.625 դրամ, տույժ՝ 459.655 դրամ:

Եկամտահարկի գծով պատասխանողի պարտքն առաջացել է պատասխանողի կողմից «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվարկված և հարկային տնտեսություն ներկայացված եկամտահարկի ռաչմարկների և հարկի գումարն օրենքով սահմանված ժամկետում չվճարելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն հաշվարկված տույժերի պայթուցքում /տես կից ներկայացված եկամտահարկի անձնական հաշվի բարձրը:

Պետական տուրքի գծով պատասխանողի պարտքն առաջացել է 30.06.2009թ-ից սկսած: Պատասխանողն ունի հանքարդյունահանման

ԺԿԿ/0039/05/ԸՕ
03.03.2010

25 01 43/2 10

գործունեությամբ զբաղվելու համար ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից 30.06.2004թ-ին տրված թիվ ՀԱ-Լ-14/233 լիցենզիան: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն պատասխանողը նշված գործունեությամբ զբաղվելու համար պետք է վճարի տարեկան պետական տուրք բազային պետական տուրքի 500-ապատիկի չափով, որը օրենքով սահմանված ժամկետում չկատարելու արդյունքում նույն օրենքի 35-րդ հոդվածով հաշվարկվել են նաև տույժեր /տես կից ներկայացված պետական տուրքի անձնական հաշվի քարտը/:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածը, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը, դեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3, 8, 67-րդ հոդվածներով,

Խ Ն Դ Ր Վ ՈՒ Մ Է

«Հատույսա շինանյութ» ՍՊ ընկերությանը պարտադրել կատարելու 984.007 դրամ հոգուտ պետական բյուջեի վճարման պարտավորությունը, ինչպես նաև նախապես վճարված պետական տուրքի գումարը:

ԿԻՅ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՒՄ ԵՆ

1. Պետ. ռեգիստրի վկայական /2 թերթ/
2. ՀՎՀՀ-ի տրամադրման քարտ /2 թերթ/
3. Անձնական հաշվի քարտեր / 6 թերթ/
4. Եկամտահարկի հաշվարկներ / 8 թերթ/
5. Թիվ ՀԱ-Լ- 14/233 լիցենզիա / 1 թերթ/
6. Միջնորդություն /1 թերթ/
7. Պետ. տուրքի փոխանցման հանձնարարական

ԱՐՄԱՎԻՐԻ ՏՀՏ ՊԵՏ

Ն Ծ Զ-ՐԴ ԴԱՄԻ ԱՎԱԳ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ա. ՍԱՖԵՐՅԱՆ